Այլ աստղիկն . Ը . 2 . գրէ այսպէս . * յառաւրս վահանայ յայտ՛ ,, նեցան նշխարք սքն առաքելոյն Թադէոսի , և տանդխտոյ կու՛ ,, սին ‖ : Ալր վահան ասելով՝ իմանայ զվահան մամիկոնեան զեպօրօրուլն սքնն վարդանայ . զի յառաւրս մարզպանուԹենէ նր պատմէ զայս . բայց հայեցեալ ի վերոյգրեալ բանս խորենացւոյն՝ պարտ է իմանալ զվահան ամատունի՝ որ հազարապետ էր հայոց ի վերջին աւուրս սքնն սահակայ և մեսրոպայ . որ և ամփոփեաց զմնարմին նորին սքնն մեսրոպայ յոշական աւանն կիմ յառապարն ոշականի ըստ այլ մարմինս սքոց : Եւ կիմ պարտ է իմանալ զմիւս վահան ամատունի՝ որ էր յաւուրս սքնն վրԹանիսէ : Ոչուցէ յայս հայելով և յակոբայ նալեան՝ զեր՛ կաւս զայսոսիկ համարի ոմն , յասելն ի գանձ՛՛ ծան՛՛ . Ը . 9 . է՛ էս . 308 . Թէ վահան ամատունի՝ որ տարաւ զմարմին սքնն մեսրոպայ յոշական , իսկ այն վահան՝ որ յաւուրս խոսրովու որդւոյ տրդատայ ի շնորհս յաղԹուԹենէ իւրոյ ժառանգեաց զոշական . իսկ ընդհակառակն ցուցանէ՝ Թէ այս երկ՛ րորդս իցէ Թոռն առաջնոյն : Այլ այն յիշատակարան՝ որ գնի յայսմաւուրս ի մայիսի . 30 . Թէ այս գիւտ նշխարաց եղև

յաւուրս վահանայ մնամիկոնոյ մարզպանին հայոց և սպարապետի, ի թուականին հայոց. ՃՀՀ. և ի քրիս. 723. յայլոց մուծեալ լինէ. զի յաւուրս մարզպանութեն վահանայ մամիկոնոյ էր եղեալ թուական հայոց. թիզ զայն, զի խորենացին քիչ ամաք յիշէ էր քան զթուականն հայոց, և պատմէ զայս գիւտ նշխարացն լեալ յիշէ քան զաւուրս իւր։

Իսկ վն բարթուղիմէոսի առաքելոյն ծանիցէ, զի յայսմաւուրս յունաց. ի յունիսի. 11. գնի, թէ նա գնացեալ ի հնդիկս՝ կատարեցաւ յաւետարանսպօլիս քղքի։ Ասէին պարտէր գնել, թէ յետ քարոզելոյ ի հնդիկս՝ եկեալ ի հայս կատարեցաւ. վն զի ամ հեղինակք, նաև յայսմաւուրքն լատինացւոց. օգոստ. 25. այսպէս աւանդեն։ Ա. յն վն ժամանակի գալ ատեան և նահատակուե նր՝ թէ յորում ամի լեալ իցէ, չունիմք հաստատուն ատուգութեն. հաւանականագոյն երևեցաւ մեզ գնել յամի ՅՌ իբր. 50։ Իսկ անուն քղքին՝ յորում նահատակեցաւ նա, պէսպէս աւանդի. Խորենացին է. 31. գնէ արևբանոս, կամ ըստ այլ օրինակաց՝ արևբենոս կամ արեբանոս։ յայսմաւուրքն. յունիսի. 30. որբանոս, (և բարմի. որ և աղբակ)։ Ագաթանգեղոս կթղթին գնէ՝ արաոբենոն կամ արաբենոն։ ասողիկ, արաբիոմն։ վարդան, արաբիոն։ ձառընտիրն, ուրբանոն։ և սքէն գորոթէոս, կորբանուպօլիս։ Նիկեփոռոս, ուրբանուպօլիս։ ասատրիքոմմ ոեվփոս, ալբան։ և սոփրոնիոս, ալբանուպօլիս կամ ազուանուպօլիս. ոմն և յայսմաւուրս յունաց՝ աւառնուպօլիս։ այլ մեք եդաք ըստ խորենացւոյն, արևբանոս։ Նոյնպէս և անուն քեռ ասատրիկոյ, զոր դարձոյց ի հաւատս սքէն բարթուղիմէոս, ուրեք գրի թագուհի, և ուրեք ագուրհի, և այլուր ոգորհի. մեք թագուհի եդաք՝ հետևելով քղքի օրինակաց։

Պրճլ գիտելի է, զի ջահկեցին զազար քղքի լինչ գրէ վն բարթուղիմեայ և թադէի. և յերես. 672. գրէ ըստ ոմանց այսպիսի լինչ. „ի հայաստան է ասէ * ՚ձ՚ամուխս գեղարդն „ սքէ, և ՚քսի արեամբ ներկեալ պատկն փշոյ. և իւղն սրբ„ բալոյս զօրհնեալն ի ՚քսէ, զոր եբեր առաքեալն թադէոս „ ի հայս. եբեր և առաքեալն բարթուղիմէոս երեք մնան „ ի յօրհնեալ հացէն, զոր ՚քս առձեռոյց. և եդեալ ի հինն „ եկեղեցւոյ, որ հայի դէպ ի գողթան գաւառն առ ե„ բասխ գետով ի տեղւոջն, զոր մաղարաթն կոչեն ‖։ Պատահին ոմքն նման և այլ բանք յայլև այլ անճանօթ գիրս, ևս և ի գիրս հարցմանց տաճ հայոյն. ը. 9. երես. 549. և յայսմաւուրս. փետր. 16. զորս չէ տեղւոյս քննել։

Իսկ վն սքէն թոմայի առաքելոյ՝ թէ արդեօք եկեալ իցէ և նա ի հայս, չունիմք ինչ գրել. և եթէ եկեալ ևս իցէ

Հարեւանցիկ, քանք յայտմաւուրսդ այլոց աղդաց ոչ հակառակին այսմ: Ա.յլ վն նշխարսդ նորա գրի՛ ի հին Հառընտիրս, թէ՛ ի Ճմկա մեծին կոստանդիանոսի և յակոբայ մծբնայ Հայրապետի յայտնեցան այնք՛ ի միջագետս. զոր բերեալ էր անդր՛ ի հնդկաց աշակերտ նո՛ր քսանթիկոս: Ա.յլ յետ մահուն յուլիանոսի ուրացողի իբրև անկան այն նշխարքն՛ ի ձեռս անհաւատից, այր մի յոսկէփ անուն յայտնեաւ՝ եբեր զայն յՅս Հայոց՝ ի գաւառն աղձնեաց՛ ի տեղի մի կոչեցեալ պաղ՝ մերձ՛ ի բերդն սեմձ՝ ի գիւղն խաղց կիմ Հոգձ. և եդ յեկեղեցւոջն, որոյ տեղին կոչեցաւ պալխանա. և ինքն կրօնաւորեալ անդէն՝ ծառայէր նմին: Ա.յլ յետ վից ամաց դրձ՛ յայտնութի՛ լեալ նմա՛ և բարձ անտի, և տարաւ մինչև՛ ի բլրակն՝ որ կայ Հանդիպ մանուկերտի, և եդ անդ. և ապա նախարարք արծրունեաց չկնեցին՝ ի տեղւոջն վանք մի: Սին Հանդոյն դնի ըստ խիք և յայտնութս. օգոստ. 22. Ա.յլ թէ երկա՛ յետ Ճմկայ՛ ի տեղւոջէ սոսկ սիւնեցան մնասունք նշխարաց նորա յայլև այլ տեղիս: Ա.սոնօր արժան է համառօտիւ իմն նշանակել և զայս, իբր դի՛ դնի՛ ի յիշատակարանի միւս, թէ սքան թամմաս եդեալ էին զաթոռ իւր յագուլիս, կի՛ թէ ագուլիս էին աթոռ սքին թումայի. այլ թէ վիմարդ և որմ՛ պատճառաւ, ոչ է յայտ. գուցէ վասն այլոց սքնի էին սոսկ ցեալ այդ:

Ի՛ վերջ անանիէ և սահապրկոյ յաջորդացն աբգարու:

Պրոկոպիոս պատմիչ յունաց. ՚ի Ը. գիրս պարսից. պրսից. գլ. 12. գրէ, թէ յետ մահուն աբգարու որդի նորա թագրեալ յերեսիա՝ բազում չարիս հասոյց ժողովրդեան. և կասկածեալ՛ ի հռոմայեցւոց՝ անձնատուր եղև պարսից. և սկիզբն յիշէ գահնաստրկոյ. Ա.սկ կերդինոս զայլ իմն գրէ. յերես. 177. կամ 141. որդի աբգարու ասէ յաջորդեալ հօրն՛ ի թագաւորութե՛ հետևօղ գոսա բարեպաշտութե հօր իւրոյ. այլ յետ նորա թոռն աբգարու նստեալ յաթոռ թագրութե՛ յետս եկաց՛ ի կրօնից ածպաշտուե՛ և դարձաւ՛ ի պաշտօն պրօշելոց: Ա.յս պատմութի՛ ոտա ընդէմ ելանեն այսմ՛ զոր բերէ խորենացին՛ ի Ճմկակիցն գերութբնեալ. յորմէ եդաբ և մեք՛ ի պատմագրութե մերում:

Ա.յլ յաղագս սանատրկոյ գիտելի է, զի ոմանք՛ ի մատենագրացն յունաց և հռոմայեցւոց, զրուկիանոս. ՚ի պատ. հայսն" փիլեգոն առ փոտայ. գերգ. էջ. երես. 267. և ասպիանոս. ՚ի պարսկ. դիդիմոսայ. երես. 242. յիշեն զսանատրուկ

ոմն Թիւր պարթեւաց ի պարսից յաւազ քան զՃիվ մերձ աթգարու։ Ապա գիտէր. գէր. կԲ. և շուխտաս ի քաւարանն իւրում՝ դնեն զանատրուկ Թիւր հայոց բէրՃիվօք մեծաց քան զաւազս մերոյս Հարաքսաս ամենատրիկոյ. և մնացեալ անտիոքացի. գէր. ծա. յիշէ զանատրուկ ոմն. և ասէ լինել այնմ արքայ պարսից՝ ազգական Թիւրին հայոց՝ Խոսրով Ճիվն, յորս կարգէ գիտէն։ Այլ քանք ամենեցուն տարաձայն են ի միմեանց. և ի յօդել իսկ զանուանն ոչ միօրինակ, այլ այլաստարաց. զի զուկիանոս գնէ սինապրթէս. փիլեգոն գնէ սինատրուկէս. ապոլիանոս՝ սինդրիկոս. և գիոնէն՝ սանդրուկէս. և ոմանք սիւնատրուկ. և այլք այլազգ. իսկ շուխտաս և մնացեալ ուղղագոյն ևս գնեն սանատրուկէս կամ սանադրուքիս։

Այլ յայտ է թէ քառս այս սանատրուկ՝ ըստ աւանդելոյ խորենացւոյն՝ ի դիպուածոյ իմեքէ եղաւ քեռորդւոյ արգատրոս. ապ եդաք՝ ի պատմութեան. գլ. ծղ. երես. 277։ Այլ եթէ այսպէս է, ուրեմն պէտք ոչ կարեն զայն անուն ընծայել այնպիսի ումեք Թիւրի, որ էցէ յաւազ քան զմերս սանատրուկ։ Այլ թէ արդարև այսոքիկ մատենագիրքն յաւազ լինէին ժամանակաւ քան զմերն սանատրուկ, յայնժամ արժան էր վկայութեան ոց անսալ. և զի չեն այսպիսի, յաւէտ պարտ է հաւատալ խորենացւոյն՝ քան սոցա, որոց քանք շփոթ ևս են։

Այլ սատ պատշաճ համարիմ յիշել և զայս, զի նաև յաճախ ընդէ մերում. ՚ի գէրս. Ճ. համ. Ղ. 4. գնի քառս սանատրուկ՝ յասելն. * զոր՝ որ զանթիւ զօրս պերճացեալ պարծեցեալս ,, սանատրուկ արքայի սատրեստանեայց սատակեցեր ‖. համ քան պապիկդ". * սանատրկով արքայիւ ‖։ Այլ այս երևի մեծ ՚ի գրոցդ. եթէ զի՝ փիսկ դնելոյ սենեքերիմ, ոմն դնի ՚ի յոհնարէնն, եղեալ է սանատրուկ. ուստի և յերիս ձեռագիրս ՚ի լուսանցան դնի սենեքերիմ. իսկ յայլ երկուս ձեռագիրս երկոքին անուճանք ՚ի միասին դնին այսպէս. * սենեքերիմ սանատրուկ արքայի ‖. ուր սենեքերիմն եղեալ է առ ՚ի յայտ առնել՝ թէ քոյն անուն նոր սենեքերիմ է, և ոչ սանատրուկ։

Այլ վն յաջորդին սանատրկոյ Թիւրին հայոց՝ յո վն երոճանդայ երկրի գիտելի է, զի որովհետև մայր նորա՝ յազգէ արշակունեաց էր և կին սհարկու և անուճանի, ՚ի Թիւրեւ որդւոյ նոր երոճանդայ՝ հնչեցաւ ոտքեք ոտքեք համբաւ յաքեմենեայս, թէ կին ումն երադոն անուն Թիւրեաւ էցէ ՚ի կոմմանա Ճին հայոց. և գուցէ այս այն է, զոր ՚ի լոյս առեալ յիշէ սոկիետս. տոմեգր. Բ. 4. Թէպետ սա զայս կին

յիշէ

Ի՛նչ լեա ապրատմայ արքայի վերին հայոց • զորմէ խօսեցաք
՚ի պատմութեան • գլ • ծղ • երես • 280 ։

՚ի վէր հեղինեայ ընտրհաւոյն՝ կնոջ տէգարու • ևս և ՚ի վէր
էպատոյ տիեզերնացուոյ ։

Յովհ (2)

Յովհաննէս • է • 32 • լեա պատմելոյ զհեղինեայ Թագուհ-
ւոյն՝ որ էր կին աբգարու , Թէ ոմն գնաց առ Յիսուս ՚ի
քէն՝ գնացեալ լեէմ՝ օգնական եղև կարօտելոյ յաւուրս ա-
ղուն , ևս , յաւելու ասել , * որում վկայէ և յովսեպոս ‖ ։
Այլ ոչ կամի ասել , Թէ յովսեպոս ևս այնպէս պատմէ զհե-
ղինեայ , ոչ պատմէ ինքն խորենացին , այլ Թէ՝ յովսեպոս
ևս յիչէ զայն հեղինէ • քայց այլազգ ամենևին , և օտար ՚ի
խորենացւոյն • քանի նա ինքն յովսեպոս ՚ի գիրս նախնեաց • է • գլ •
2 • 3 • և 4 • ոչ և ՚ի գիրս պատերազմաց • ը • 2 • 6 • և 8 • զհե-
ղինէ համարի լինել Թագուհի ադիաբենոց • յոր միոյ մասին
աստուածանեայց • և ասէ զնմանէ , Թէ դարձաւ ՚ի կրօնս
հրէից • և գնաց լեէմ երկիրպագանել ՚ի տաճարի և մա-
տուցանել զոհս • և անդ օգնական եղև աղքատաց ՚ի սուղն ։
Այլ նախ քան զայն յաւելու գրել երկարապատում բանիւք ,
Թէ սրպէս որպի նորին հեղինեայ իզադ անուն՝ այր հաւատա
և զարդարեալ ամ բարեկարգութիւք՝ դարձաւ ՚ի կրօնս հրէից ,
և Թլփատեցաւ • որ և ասէ քզմ ինչս առաքեաց առ կարօ-
տեալսն լեէմ ։ Այլ զի փոքր մի Ժամակից էր այն իզադ մե-
ծութեան արգարու , զբնմ գործս արգարու այլ և այլ հանգա-
մանաւք նմա ընծայէ • մինչդ զհաստատել նորա զարտաշէս ՚ի
Թիգրոսէ պարսից • որոյ վէմ ասէ՝ եա նմա արտաշէս զերկիրն
մծբնայ , զոր առեալ էր ՚ի հայոց • և Թէ հայրն իզատայ
տուեալ էր որդւոյ իւրում զգաւառսն կատոն , ուր են ասէ
մասունք նոյեան տապանին մինչև ցայսօր • և այլ ևս բանք ։
Այլ ՚ի վերջոյ յաւելու , Թէ իզատ և հեղինէ Թագէցան պատ-
ուիրեալ ՚ի շէրիմանն , զորս շինեալ էր հեղինեայ երկաք տապալե-
զօք հեռի լեէմէ ։

Այլ պիտելի է , զի որովհետև խորենացին ՚ի վկայուն բանից
իւրոց կոչէ առաքեալ զյովսեպոս , այսու յայտնի ցուցանէ ,
Թէ ինքն ընդունելոյ էր զայն պատմուն յովսեպոսի • և հա-
մեմատեալ էր զբանս նոր ընդ բանս դիւանին եդեսիոյ և զե-
րուբենայ • և տեսեալ՝ Թէ յովսեպոսի բանք առնոյն հեղի-
նէ հայրն , և սակայն այլազգ են , չէ առեալ ինչ ՚ի նմանէ ,
այլ միայն այսչափ ինչ է եղեալ , Թէ այժմ վկայէ և յով-
սեպոս ։ Այլ ընդ այսոսիկ որոգիոսի • է • 6 • որ և զհեղինեայ
և զիզատայ ասանդէ լինել քրիստոնեայս , որովհետև ինքն

յով-

յովսեպոս հրեայ էր , յիւր կողմն առնու զհեղինէ , նոյնպէս և զգործս ինչ աթգարու տայ իշատայ · զորմէ և ՚ի թագաւորացն հրէից քաղմապատիկ առասպելք գրին ։

Իսկ եւսեբիոս կեսարացի , որ նմանապէս ընդհեղեալ էր ըզբանս դիւանին եդեսիոյ և զբանս յովսեպոսի , նախ ՚ի վերնագրի · 12 · գլխոյն · Ե · գրոց · պատմ · ենէաղ · կոչէ զհեղինէ՝ թագուհի ասորեստացւոց , որք էն եդեսացիք , ոյք ասանգէն մատենագիրք · և յետ պատմելոյ ՚ի նոյն գլուխ , թէ ոյք ձեռնտու եղև նա կարօտեալոց յաւուրս սովուն , յաւելու՝ թէ * Ո՛ստ ,, ադիաբենայ թագուհի ասեն լինել ‖ · որով ցուցանէ՝ թէ ոմանք , ըստ որս և յովսեպոս , այնպէս համարեցան , և ոչ թէ այնպէս էր ։

Այլ թէև այնպէս լինէր , այսու ամենայնիւ մարթ էր ասել , թէ հեղինէ էր թագուհի նաև այնր մասին ադիաբենայ , որ էր ըստ իշխանութեան հայոց · զի պլինիոս · գիրք · Ե · և · Ղ · ևս · զՆ ադիաբենայ գնէ ՚ի սահմանակցութեան հայոց ։ Ո՛ր ՚ի մէջ բերէ և կալմէթ · ՚ի ՌԿՆ · ՃՆՆ · Ե · 18 · և հաստատէ , թէ * ադիաբենն գաւառն ասորեստանի եղև երբեմն մասն հայաս ,, տանի ‖ ։ Այս եթէ արդարև այն մասն ասորեստանի ՚ի ձեռն ադիաբենայ գնէն ըստ մասին եղև երբեմն ըստ իշխանութեան հայոց , զայս առաւել պարտ է իմանալ վասն այնր ժամուն , յորում կէնդանի էր թագուհին հեղինէ · որով և Ճշմարիտ լինի ասել , թէ հեղինէ կէին աթգարու ոչ միայն էր թագուհի հայոց , այլև թագուհի ադիաբենացւոց , գոնէ ըստ մասին ։ Ո՛ այս մարթ էր ասել նաև զաթգարէ՝ որ էր այր հեղինեայ · իթէ թէ՝ և նա ոչ միայն էր թագաւոր հայոց , այլև գաւառին ադիաբենայ ։

Ստանօր հնար էր տարակուսել ՚ի վէր գրոճածոց յովսեպոսի · իթէ զի՞ եթէ զբանս նոր զատացեալն զկապագայ աղբայէն ադիաբենայ՝ համեմատեացուք ըստ բանս խորենացւոյն , զորս գրէ զաթգարէ Թագրէն հայոց , գտանեմք իւիք իւիք նոյն · Թէպետև ըստ պէսպէս հանգամանաց այլև այլ ։ Այս եթէ զանունդ իշատ ևս քննեացուք , տեսանեմք մերձաւոր ՚ինչ նմանակութեի անուանն աթգարու · զի իշատ կամ իշեդ նշանակէ յարգուէ աւագուէ · որով նոյնանայ ըստ անուանն աթգարու ըստ աւագայրուէ ։

Այս գրէ , յովսեպոս՝ որ ոչ ուրեք յիշէ զանուն աթգարու , գրէ վասն իշատայ՝ թէ էր որդի մնուվազայ · իսկ խորենացին՝ որ ոչ ուրեք յիշէ զանուն իշատայ , գրէ վասն աթգարու · Է · 25 · ևս · թէ էր որդի արշամայ · և ՚ի գլ · 23 · ասէ , թէ * զսա ,, (այ զարշամ) ոմանք յաստուց կոչեցին մնանուազայ (կամ ,, մանուազայ) , ըստ յոլովից աւրուցն՝ կրկին ուանելով ան-

,, ուանս ‖ ։

ոչ ևս ես ։ Արդ՝ երևի, թէ իշատ և աբգար առ միմեանս հայ-
ին. և կամ գուցէ երկոքին քառքդ ևս են անուն միոյ. մին
իբր յատուկ անուն, և միւսն իբր մականուն. զի թերևս
յատուկ անուն աբգարու իշատ էր՝ կամ ըստ հայոց սպատ. և
մականունն աբգար, ցի աւագ այր ։

Այժ՛ի վէր այսր ամի՝ ըստ ՀՀմարտութեն խօսելով՝ պարտ է ա-
նել, թէ իշատ և աբգար այլևայլ անձինք են՝ մեծ ժամա-
նակաւ. զորս և տակիտոս յիշէ որոշ որոշ. տաբեգր. ԺԵ. 12.
և 14 ։ Այս տակայն յովսեպոս՝ որ ժամակիցն էր իշատայ, ի
լոյս գրելով՝ (ոչ սասոյաք) խառնեալ է զգործս և զորպե-
սութեն անձին աբգարու՝ որ էր փոքր մի յետ, ըստ գործս ի-
շատայ՝ որ էր յատուկ սանասարկոյ. և որ յատուկ էր աբ-
գարու՝ տօնեալ է իշատայ. որոյ համբարդ ասել լինել զմանու-
վազ վերէից եղբայր նր. զոր և յիշէ ժամակիցն տակիտոս.
տաբեգր. ԺԵ. 1. և 14 ։

Ի՛Վ ՀՈՂՈՒՆ ՄԾԲՆԱՅ ։

Ա սան մծբնայ քաղաքին գիտելի է, զի ոմանք ստուգաբա-
նելով զանունդ մծբին՝ իբր թէ ծնայ մին, համարին՝ թէ՝ ի
ժամանակս սանասարկոյ կոչեցաւ այնպէս՝ ի կանգնել նր զար-
ձան իւր՝ գրամ մի ծնացեալ՝ ի ձեռին։ Այս տակայն արտաքին հին
պատմիչք յայտնի ցուցանեն, թէ յատաչնամէ խակ մծբին կո-
չիւր այն քաղաք. և յոմանց ևս անտիոք միգաւոնիոյ՝ ըստ
պլուտարքեայ. և ըստ պլինիոսի. Ե. 13. և ըստ յովսեպոսի. Նախն.
Ե. 3. և ըստ այլոց ։ Ա՛ծոյ զայն, զի՝ ի պատմել խորենացւոյն,
թէ յորմամ քաղքի իցէ Թագրեալ վաղարշակ՝ գնէ զաթոռ նր
լինել՝ ի մծբին. և զայս առնու՝ ի մարիբասայ, որ էր յա-
ւուրս նորին վաղարշակայ. և եթէ մարիբաս չէր գրեալ
զաթոռ մծբին, այլ՝ եդեալ էր զայլ քառ, ծանուցանէր
զայն խորենացին ։

Գիտելի է և այս, զի ոմանք յարտաքին պատմչաց ցուցանեն
զքաղաքն մծբնայ լինել քաղաք պարսից, զոր ընդ նիսիբինն
կոչեն. և ասեն՝ թէ անկեալ էր այն երբեմն՝ ի ձեռս հռոմ-
մայեցւոց. և այս մինչև՝ ի ձեռն սանասարկոյ և անդր ևս.
իսկ յովսեպոս. Նախն. Ե. 3. համարի, թէ յատաչնէն էր՝ ի
ձեռս հայոց, և ասպա անկաւ՝ ի ձեռս պարսից. և ընդ ասէ
ետուն իշատայ Թագաւորին ադիաբենոց (զորմէ յիշեցաք՝ ի
նախընթաց ծանօթութենէ) ։ Այս զննարար. ԺԳ. 7. ասէ,
թէ յատաչգաղտն էր ընդ իշխանութեն հայոց. և ապա յա-
ւուրս միհրդատայ անկաւ՝ ի ձեռս հռոմմայեցւոց. և դնէ
պատձառ այսպիսի. միհրդատ ասէ՝ ի տեսայանալ իւրում՝

յօժիտ առեալ էր զայն ՚ի տիգրանայ . իսկ Հռովմայեցիք պատերազմեալ ընդ միհրդատայ՝ առին զայն ՚ի ձեռաց նոր : Ա.յլ ասելն է՝ թէ մծբին քաղաք Թեպէտ և քաղում անգամ անկաւ ՚ի ձեռս քաղմայ , բայց յաւուրս սահատրկոյ էր ՚ի ձեռս նր , և ոչ թէ ՚ի ձեռս Հռովմայեցւոց կիմ պարսից . զի այդ յայտնապէս անհիմն է յառ ատոյգ վկայութէ ականատեսաց ղերբենեայ , յորմէ քերէ խորենացին : Պարթ է և առ ասել՝ թէ գուցէ այն այլ քաղաք էցէ :

՚ի վե արշակունի ընչքացն պարսից՝ որ նախայն չեպ արշաւքն ինելն ՚ի դաբեհ վղղփէս :

(1) Յաջորդութէ Թչերացն պարսից՝ որք նստան զկնի արշաւբի , քանզի ինչ գտանեմք , զորս դժուարին է մեկնել ՚ի կամիկն միաբանել զբանս արտաքին մատենագրաց եւ քանս խորենացւոյն . առ որոյ ծանօթուն գիտելի է , զի խորենացին չրնթացս պատմութէ իւրոյ դիտէ միայն առաջի առնել , թէ ո՛ր որդւոց յորդիս իջին արշակունիք ՚ի Թչերութէ պարսից . եւ որում է տեսանել յերկրորդ գիրս նր . գլ . 65 : Այլ թէ արդեօք Թչերեալ իցեն և այլք ոմանք ամն ինչ յաւուրս խոռովութէց և պատերազմաց՝ որք եղեն ՚ի մէջ պարսից և Հռովմայեցւոց , զայնցանէ փոյթ ինչ ոչ առնէ . զի ոչ եղև նմա կամք զբՀանուր պատմութէն պարսից առաջի դնել : Ա.յլ քզի հարկ եղև մեզ յիշել ՚ի պատմութէ մերում զդործս ինչ այնց Թչերաց , որք կապակցեալ են եւ գործոց Թագաւորացն մերոց , կարևոր համարիմք համառօտիւ ծանուցանել աստ , թէ ո՛յք են այնք՝ զորովք զանց առնէ խորենացին , և զիարդ :

Առդ՝ խորենացին յետ դնելոյ Թչերել արշաւբն ամն . ձգ . զկնի նր դնէ՝ թէ նստաւ երեց որդի նորին արտաշէս՝ եղբայր պահլաւեանց . իսկ ՚ի դիրս ժամակից հռովմայեցւոց՝ որք եւտն պոմպէոս եւ պարսից , ևս և ՚ի դիրս յովսեպոսի՝ որ մերձաւորն էր ժամաւ , յետ արշաւբի՝ զոր նք կոչեն փրահատ , դնի և այլ Թչեր վնտն անուն . և ապա արտաշէս , զոր նք արտաւանէս կոչեն : Ա.ւ ոչ պատմեն նք , յետ մահուն արշաւբի իրրև առաքեցաւ վնտն ՚ի հռովմայ՝ (ուր ՚ի պատանդի էր) , երթալ Թչերել ՚ի պարսս , այլևայլ շիոհեթութէնք եղեն ՚ի մէջ Թչերութէ պարսից ՚ի մէն նորին վնտնայ . մինչև հուսկ յետոյ մերժեցին զնա որդիք արշաւբի . և ինքեանք սկսան կռուիլ վն Թչերութէ . զորս հապիւ հաշտեցոյց աբգար : Ա.ւ խորենացին զայս վնտն իրրև զիտորթ՝ արտաքոյ Թողու ՚ի կարգէ Թչերացն պարսից . և յետ մահու

արշաւարի դնէ զարտաշէս ։

Ալը արժան է գիտել և զայս , զի խորենացին համառօտուէ աղաղաւս յարէ անմիջապէս զկնի մահուանն արշաւարի , թէ ի ծագել անդ խռովուէ գնացս աբգար խաղաղել զնա . բայց այսու ոչ համարի խորենացին , թէ ամկ ինչ ոչ էանց ի միջի . քանզի երևի թէ աւելի քան զեօթն ամ տեւեաց այն շփոթուիլն՝ ի վերջին ամաց օգոստեայ կայսեր մինչև ցառաջին ամն տիբերեայ . ուստի և նա ինքն խորենացին ասէ , թէ հասեալ աբգարու ի պարսս՝ եգիտ արդէն Թագաւորեալ զարտաշէս . զորոյ և զամս Թագաւորելն հաշուէ ի մահուանէ հօր նորա արշաւարի՝ ամս . լԸ . ոմն եղեալ և մեք ։

Նա դրձ՝ Թէպէտ խորենացին . Ը . 26 . պատմէ զգործս ինչ արշաւարի և զմահ նորա յետ մահուն օգոստեայ , և յաւուրս տիբերեայ , բայց հռովմայեցիք յառաջ դնեն զմահ արշաւարի . և ասեն , թէ լուեալ օգոստեայ զմահ նորա՝ առաքեաց զվնաս , ձե . զորս երկար լինի քննել . բայց այսպիսի շփոթուածն ի վերջին երկուս ամն օգոստեայ՝ տիբեր կարգեալ էր գահակից նմին ։

Ոյրձ՝ խորենացին . Ը . 66 . յետ մահուն արտաշեսի արտաւան կոչեցելոյ դնէ անմիջապէս զդարեհ . բայց պատմիչք հռովմայեցւոց յաւելուն և զայլ Թագս ի ժամկ խռովութե , որ են խուտարզ կ գոտորզ՝ և ուխարտ . ձե . և ապա զվաղդէս , կիմ զվաղեգեսս՝ զոր խորենացին գարեհ կոչէ . ուստի և մեք երկու անուամբք կոչեցաք զնա ։ Նա Թէպէտ խորենացին վճռ պերոզայ ասէ , Թէ վաղեգեսս կոչի ի յունաց , բայց այդ ոչ հակառակի այսմ . զի երկոքին ևս այնպէս կոչէին ի գիրս յունաց . ըստ որս նաև վախարշ նոյնօրինակ վաղդէս կամ կիմ վաղեգեսս կոչի առ նմա ։

Ա՞ յայսր դարեհի վաղագեայ խորենացին . Ը . 66 . ասէ Թագաւորել ամս . Ը . յորոյ ուԹերդ ամի գնէ Թագել մերոյս երուսանդայ . զանց արարեալ զամսն ամեք՝ յորս ինքն դարեհ յաւուրս շփոթուելն . ոմն յայեանի տեառնէ ի պատմուԹե երկուց ժամակից մատենագրաց՝ տակիտոսի և յովսեպոսի . որովք և մեք Թագրուեմք նմ ըստ նմա հաշուէն . իս . և ըստ այսմ՝ նաև Թագրելն մերոյս երուսանդայ լինի ի ժը երորդ ամի գարեհի . զոր խորենացին . Ը . 34 . ոմն ասացաք՝ գնէ յուԹերորդ ամի նմ ։ Այնու և Թագրելն մերոյս արտաշեսի լինի յերեսնևինեներորդ ամի նորին գարեհի . զոր խորենացին . Ը . 44 . գնէ ի քսանևինեներորդ ամի նմ ։

Ի վեր բանից նոր հայերնագրաց յաղագս յաջորդութեան
նիգրացւոյն հայոց ։

Որպէս յայտ է յասացելոցս ի Ժամանակագրութեան Ա. Ո. (1) · երես · 563 · եւ · զոր միանգամ ասացաք էրևելի պատմիչք հռովմայեցւոց ժամակիցք ի վէր քան զԹիգրաց մերոց մինչև յտիրելի արշակունի տուրս երոքեանդայ , զդուշութիւն քննեալ մեր՝ եդաք զայնս ի պատմութիւն . իսկ որ ինչ գրին յետ տիրելիայ ի պատմութիւնս հռովմայեցւոց , որովհետև ոչ ասանդին ի ժամակից և ի հաւատարիմ անձանց , և զի անտրոշ իմն են , և նեղհակ ևս էլանեն հարազատ պատմութեան Թիգրացւոց հայոց , Թողաք ի քաց իբրև զանստոյգս և զկորեալս ։

Այսպէս արդի մատենագիրք ունեալք կամելով յօրինել զկարգ յաջորդութեան Թիգրացւոց հայոց յետ տիրելիայ , առանց ունելոյ զտեղեկութիւն պատմութեանց աղգին՝ յուզեալ միայն ի մնացուածս դրեանց օտարաց , ի նոցունց հնարին կանգնել զշինուածն՝ զոր խորհին . յորս առաւել գտաւ յոմհանեսէ վայլանատ , զոր յիշեցաք ի Ժամանակագրութեան Ա. Ո. (1) · երես · 546 ։ Այսպէս սա բազում աշխատ լեալ ի պատմութիւնս պարթևաց , և տեսեալ ի նոսին բազում ինչ վերաբերեալ առ հայս , յորդորի խօսիլ ստոյգ ինչ և ի վէր կարգի Թիգրացւոց հայոց · հատոր · Ա · երես · 398 · մինչև ի 405 · և նախ ի խնդիր լեալ՝ Թէ ուստի ծագեալ էրիցէ այն Թիգրութիւն , գտնի զանուն իւրոց գնեանդ , ուր ոչ գոյ տեղի հիման · զկրկին հաստատէ , Թէ նախ արտաշատ կուսակալ՝ (զոր եդաք ի պատմութիւն · Բ · 1 · երես · 204 ·) կանգնեաց զԹիգրութիւն հայոց · և յետ նմին ասէ Թիգրեցին և այլք որդւոց յորդիս ։ Այս կարգք բանից վայելանատայ են այս ·

* Արտաշիսա կուսակալ մեծին հայոց յաւուրս անտիոքոսի
„ մեծի արքային ասորեստանեայց վտարանդեաց , և զայն
„ Թիգրութիւն սեպհականեաց ինքեան և յետնոց իւրոց · այլ
„ յանտիոքոսէ եալիսանէ ի պարսուն մատնեալ՝ ձերբա-
„ կալ եղև , և եղաւ ի դիպահոլ ։
„ Արտաւազդ որդի արտաշիսայ յաջորդեաց հօր իւրում
„ ի Թիգրութիւն տէրն հայոց · սա ընդեմ եկաց պատերազմաւ
„ արշակայ միհրդատայ՝ մեծ անուանելոյ ։ (Այս ասի՝ ուր
պարտ էր դնել զսկիզբն Թիգրութիւն հայոց յաղգէ արշակունեաց ի վաղարշակայ՝ ըստ պատմութիւն ականատես վկայելն մարիբասայ , սա ինքն վայլանատ չունելով բնաւ ծանօթութիւն զայնմանէ , համարի՝ Թէ յաղգէ այսոցիկ կուսակալացս սերեցան Թիգրը հայոց յոյժ ճշմարիտ · վնյ և շա-

„ բայա-

բայարե զկարդ նոյ այսպէս) :

„ Տիգրան որդի արտաւազդայ յետ մահու հօր իւրոյ ա-
„ րեաց Թագրուհի հայոց . և նեղեալ մարտիւ ի պարթևաց՝
„ ետ նոյ պատանդ զորդի իւր զտիգրան ի հաշտութիւն :
„ Տիգրան որդի տիգրանայ՝ որ ի պատանդի էր առ պար-
„ թևս , ի մեծէն արշակայ միհրդատայ կալեցեալ ի թա-
„ գաւորութիւն հայոց , և ընդարձակեաց զայն մեծամեծ . էառ
„ և զփոքրն հայք . և առաքաւ արքայ արքայից :
„ Արտաւազդ որդի տիգրանայ յաջորդեաց հօրն ի թա-
„ գաւորութիւն . սա նենգութիւք ձերբակալ եղև ի մարկոսէ
„ անտոնինեանց եւսուբեայ . և ընդ այլ գերիս տարեալ եղև
„ յաղթանակաւ յաղեքսանդրիա : Ո՛ գլուխ սորա հատեալ
„ կղէոպատրեայ՝ յղեաց առ թագն մնրայ՝ առ ի յօգնակա-
„ նութիւն իւր ձգելոյ գնա ‖ :

Յետ զայսոսիկ դնելոյ՝ կարգաւ Թոռէ վայլանտ զայսոսիկ Թագրս , որք նաեան ի մոան վերին հայոց . զորս և մեք ե-դաք ի պատմութեանս ըստ հին մատենագրաց . և համարի՝ Թէ նոքին էին հարազատ Թագաւորք բոլանդակ հին հայաստա-նեայց . և հաստեցեալ մինչև ի Թէոդոսէն տիրեն տարի կոնեալ՝ ապա ակամայ որդւոց յորդիս յաջորդեցուցանել զգ-Թագրս հայոց՝ մինչև ցարտաշիր վերջին , այսպէս :

* Աքսեդարէս (կամ աշխադար) արշակունի՝ որդի կամ Թոռն
„ տիրիթայ՝ յետ նորա Թագրեաց ի վիճ հին հայոց . զոր ի
„ բաց վանեալ խոսրով արքայ պարթևաց , զի կարդեացէ ի
„ վիճ հայոց զԹոռն իւր զփարթամասիրն : (Ո՛ այս խոսրով՝
զոր սա Թագաւոր պարթևաց դնէ , մաղաղ անախոհացին կո-չէ Թագր հայոց) :
„ Փարթամասիրն որդի բակուրայ արքայի պարթևաց , ի մե-
„ ռանիլ հօրն՝ ի ձեռն խոսրովու արքայի պարթևաց վանել
„ զԱքսեդարէս՝ կարգեցաւ Թագաւոր հայոց . այլ ի ձեռն
„ տրդատեանոսի կայսեր մերկացաւ ի Թագրութենէն : Հայաս-
„ տան յաւուրս տրդատեանոսի անկաւ ի Թիւմն գաւառացն
„ Հռոմէականն ներուժն . այլ Թէ ոմն ոք յայնժամ եհաց անդ
„ իշխան (ի կողմանէ Հռոմայեցւոց) , չէ յայտ :
„ Փարթամասացաւ՝ որպէս երևի՝ որդի Աքսեդարայ . սա ի
„ տրդատեանոս կայսերէ կարգեցաւ Թագր պարթևաց . և ա-
„ պա մերժեալ ի նոցունց՝ հաւ յաջորդեաց կայսերէ ի հայ-
„ բենի Թագրութեն հին հայոց :
„ Խոսմանիդէս որդի փարթամասացաւ՝ յաջորդեաց հօրն
„ ի Թագրութենէ հայոց . որոյ եղ Թագ անառնինաս պիտ
„ կայր , ոչ ուսանիմք (մանաւանդ) ի գրամոյ :
„ Սոյեմոս որդի ախեմենիդայ նստաւ ի հայրենի աթոռ

,, Թագաւորութիւնէ հայոց՝ ընկեցաւ ՚ի ձեռն վաղոգեսայ երկ-
,, րորդի (յիւ պերոզի) արքային պարթեւաց • և ապա ՚ի զու-
,, կիոս վերոս կայսերէ վերստին հաստատեցաւ յիշխանութիւնէ
,, իւրում • ոչ քաղեմք ՚ի դրամանց նորին կայսեր ։
,, Ամանատուկ՝ որպէս կարծի՝ որդի սոյեմեայ • որ տիրեաց
,, Թիգրանեայ հայոց յաւուրս կոմոդոսի կայսեր ։
,, Վաղոգես (այն է վաղարշ) որդի սանատրկոյ, ՚ի ձիկին՝
,, յորում առին հռովմայեցիք զՆս ծուխս ՚ի պատանդս կա-
,, զաղանեայ, յինքն կալաւ զինացեալ Ծս հայոց հաւանու-
,, թեամբ սեպտիմոսի սեւերեայ կայսեր ։ Օ ամս յետոյ նեն-
,, գուածք ՚ի կապանս էարկ անտոնինոս կարակաղոս կայսր •
,, և եղ ՚ի բանտի • ուր և հիւանդացեալ մեռաւ ։
,, Տրդատ որդի վաղոգեսայ ընկալաւ զԹագ ՚ի մանկրինոս կայ-
,, սերէ • և տիրեաց Թագաւորութիւնէ հայոց՝ յետ վախճանելոյ
,, հօրն իւրոյ ՚ի բանտի ։
,, Ընդ ոյժ եղբայրն արտաւանայ վերջնոյ արքային պարթեւաց
,, կացուցաւ ՚ի նմանէ Թագր Ծին հայոց յաւագնուամ ամի կայ-
,, սերութիւնէ սեւերեայ աղեքսանդրոսի • քաջասիրս ընդեմ եկայ
,, արտաշղի (սասանեան), որ զեղբայրն նորա զրկեալ էր ՚ի
,, Թագաւորութենէ և ՚ի կենաց • և եղև քարեկամ հռով-
,, մայեցւոց ։
,, Ընդ ոյժ արտաշղի, կամ արտապաշղիս (գուցէ սովին խմանայ
,, զարտաւաշղ մանդակունի զարարապետն հայոց) յաջող-
,, դեաց ՚ի Թագրութիւնէ հօր իւրոյ արշակայ • այլ ոչ այնպէս
,, հաւատարիմ եղև առ հռովմայեցիս • քզի ձեռն ետ շատ-
,, հոյ արքայի պարսից ընդեմ վաղերիանոսի կայսեր ։
,, Որդի արտաւաշղայ, որոյ անուն չէ մեզ յայտ, յաջող-
,, դեաց հօր իւրում, և եղև մտերիմ քարեկամ հռովմայ-
,, եցւոց • Այս ընկալաւ զքրիստոնէական հաւատս յաւուրս
,, դիոկղետիանոսի • և օգնական եղև զօրօք իւրովք գաղե-
,, րեայ մաքսիմիանոսի ընդդեմ ներսեհի արքայի պարսից ։
,, Նորայ մաքսիմիանոս իբրև նստաւ կայսր, պնդզմ շարժեաց
,, ընդդեմ հայոց, որք ՚ի վաղ ՃմկայՅ քարեկամութիւն էին ը-
,, հռովմայեցւոց ։ Այս որովհետև քրիստոնեայ էին նքա, կա-
,, մեցաւ բռնութիւնք ՚ի պաշտօն դիւց դարձուցանել զինս, ըզ-
,, քարեկամս Թշնամին՝ և զթշնամին քարեկամս արար ։
,, Տրդատ որդի վերոյգրեալ անանուն Թագրի՝ յաջորդեաց
,, զաւեռս հօր իւրոյ • յորում ժամանակի ստիպեցան հայք
,, Թողուլ զօրէնս քրիստոնէութիւնէ, և նա ինքն եղև պաշ-
,, տօնեայ դիւց, և հրամիւք ինքն յորդորեալ՝ ընկալաւ ըզ-
,, հաւատս ՚քսի առ մեծին կոստանդիանոսիւ ։
,, Ընդ յաջորդեաց հօրն ՚ի Թագրուէ հայոց յաւուրս կոս-

,, տանդեայ

,, տանդեաց հայսեր որդւոյ կոստանդիանոսի մեծի : Ա-
,, բարեկամ Հռոմայեցւոց գտոյ՝ հրապուրանօք պատաճա-
,, նութեան հրաւիրեալ՝ ի շապհոյ երկիդ , և մեծարեալ՝ ի
,, խրախուսս սեղանոյ՝ զրկեցաւ յաչաց . և արծաթի շղթա-
,, յիւք կապեալ՝ աքսորեցաւ՝ ի բերդն ակաւանայ . ուր և
,, տանջեալ սրամահ մեռաւ :
,, Պարս (ոյ է պապ) որդի այսր արշակայ . սա էլ սակաւ ա-
,, բամբք յամուր դղեկէն արտաքերից՝ ի տադրեցւոց մօրն , և
,, գնաց առ կայսրն վաղէս . և նա հրամանեաւ նմա դեգերիլ
,, ի նեոկեսարիա պոնտոսի աղբունի ոռձկօք . և ապա ան-
,, տուտ ածաւ յաշխարհն հայոց՝ ի ձեռն տերենտեայ զօրա-
,, վարի՝ առ՝ ի ունել պիշխանութեն աղգին առ ձեռ մի առանց
,, թագաւորական շքոյ . բայց յետ որոյ հաւ զթագ , սպանաւ
,, դաւով :
,, Արշակ յաջորդեաց եղբօր իւրոյ պարայ՝ ի թագրութեն հայ-
,, ոց՝ յետ մահու շապհոյ արքայի պարսից . սա գաշն ե-
,, դեալ ընդ հռոմայեցւոց՝ վայելէ՝ ի խաղաղութեն յաւուրս
,, հաշտութեն թէոդոսի ընդ պարսից : Այլ՝ ի մեռանիլ իւ-
,, րում եթող կտակաւ զթագրութեին որդւոց իւրոց արշակայ
,, և տիգրանայ :
,, Արշակ՝ երէց որդի արշակայ նախասահմանելոյ . սա քանզի
,, կտակաւ հօրն զնուճաղատդին մեռոնն հայոց ունէր զիշխա-
,, նութիւն , և եղբօր նորա տիգրանայ վիճակեալ էր քա-
,, ռապատիկ մեծ մասն աշխարհին , ՝ի վեր եհան զիրան առ
,, կայսրն հռոմայեցւոց , և այնպէ հնարէր ընկենուլ զեղ-
,, բայր Խոր՝ ի թագրութէ : Այլ իբրև տիգրան եղբայր նը
,, անձնատուր եղև պարսից հանդերձ թագաւորութէն , սա
,, յայնժամ յանձն արար զթագրութի իւր թէոդոսի փոքու ,
,, և եկաց առանձինն :
,, Տիգրան որդի նախընթաց արշակայ՝ և եղբայր արշակայ
,, վերոյասացելոյ , երկուցեալ՝ ի կայսերէն հռոմայեցւոց՝
,, անձնատուր եղև ազբայրն պարսից՝ թագրութէն հանդերձ ,
,, լաւ հաւանութեալ առակաւն կեանս վարել ընդ ազրութէ պար-
,, սից , քան հաշտութէ ընդ հարազատսն իւրոյ թագաւել՝ ի
,, հայաստան բարի հատասոյ : Այլ զայս օրինակ աւադիկ
,, առեալ թագրութի տէն հայոց . . . ընդ սեպհական թա-
,, գաւորօք՝ մինչև ցամ ՚ռն իբր . 412 ‖ :
Այս այս են բանք յովհաննու վայելատայ . զորս առաւել
ևս ընդարձակ հանդերձ բազում մեկնաբանութէք՝ ի գրէն
գկարդ թագրութէն պարսից , զորոց ոչինչ ընդհատ յայտնի
իսկ : Այլ թէպէտ զորս գրէ՝ ջանայ մի այնց վկայս թե-
րել , բայց բանք այնպիսիկ վիպասից կամ յայլ ինչ հայեին , և

կիր անտրուշ ինն զրոյցք են՝ առեալ ի լոյս • զոր եթէ աք Ը
Հարազատ պատմուհս Հայոց Համեմատեսցէ , ամենևին այլ
աղգ տեսանէ՝ քան զոր խնացեալ է վայելատ : Եւ եթէ ա՝
որ իբր թէ ի մէջ գտանոց հնուտ համարեալ է ի տեղեկուհ
պարթևական պատմուհնէց , այսպէս գրէ , զինչ պարտ է
ասել և վա այլոց , որք առանց քննուհնէ գրեն՝ զոր կամին •
Ոտոց ձանձրացեալ և մեր՝ յաւէտ պատշաճ դատեցաք ըզ
հրաժարականն տալ զանխոյս նոյ ողջոյն , քան երկայնմտուհնէ
մի առ մի ի բանս մատուցանել քննուհնէ : Այս ևս յայն
տակս պատ յիշատակեցաք , զի ծանիցին ընթերցողք՝ թէ զինչ
գրեն արդի մատենագիրք ի խօսել իւրեանց ի վր Հայոց • ոմն
և ի վր այլոց արևելեայց :

Ի վր ժամանակի սբց սուքիասեանց :

(1) Ժամանակ սբց սուքիասեանց թէպետև չէ որոշակի յայտ
նի , բայց ըստ կարգի պատմուհնէ վարուց նոյ ըստ որում աւան
դի յայտնութեան օգոստ • 27 • ի սեպտեմբ • 19 • կատարումն
նոցին հասնուրի լինել յամի ետն իբր • 130 : Եւ ասկայն ի
գիրս յովհաննու կնճռկոտ աւանդի և այսպիսի ինչ • * Եւ զ
„ գականք սաթինկան (այ սուքիասանք) , որք ի քո մկրտե
„ ցան ... յետ ամաց բազմաց (իբրև) սպանաւ թագաւորն
„ Հայոց խոսրով յանակայ , և անիշխանացաւ երկիրս Հայոց ,
„ ապա բառնահլայ ոմն եկեալ յալանաց դրանէ , և ի խրն
„ դիր եղեալ գրով վկայիցն (սուքիասանց) , և գտեալ զնս
„ ի ջրաբաշխն կոչեցեալ լերինն • և հարցև փորձ արարեալ
„ զնս վասն ի քո հաւատոյն , սուր ի վերայ եդեալ կտորել •
„ և լեառն ապա յայնմ՝ եռաց յանուն սուքիասեոսի գլխաւո
„ րի սրբոցն սուխաւ անուանի ։ Մինն համառօտ զնի և ի
ձառընտիրս :

Բայց այս բանք երևին պակասեալ ի գրադրաց • զի որովհետև
բան աւանդելոց սորին իսկ յովհաննու կնճռկոտ սուքիասանցն
էին յաւուրս արտաշեսի որդւոյ սանատրկոյ՝ աշակերտեալք
սահեանց աշակերտելոց սբին թադէի , զնոսր հնար էր նոյ
կեալ մինչև ցմահն խոսրովու Տօր տրդատայ • վր զի ի թա
գաւորելոյն արտաշեսի մինչև յայնժամ անցին ամք • 170 :
Եւ կիր թերևս սոյն այս արտաշէս՝ խոսրով ևս կոչիւր • ըստ
որում մատաղ անտիոքացի զնճռկոտն հայոց՝ որ նաեւբ յայնմ
ժամանակի յաւուրս տրդատիանոսի կայսեր , խոսրով կոչէ • թէ
պէտ և պատմիչք յունաց հասնորին զնա թագր պարսից : Եւ
կամ դուցէ այլք ոմանք էին այս սուքիասանքն , և այլք
ոմանք աշակերտք սահեանց • զորոց չեմնիմք ինչ գրել հա

էաս

ստատեաւ ։

Յաւելեալ լինի ՚ի ճառընտիրս , Թէ սուքիասանք էին յաւուրս շապհոյ . և այլ ևս քիմ քանք . զորովք չի՛ հարկ երկար դնգերիլ . զի անստոյգ երևին ըստ ժամկին . ոմք և ըստ անուանցն , որք յայլևայլ տեղիս այլևայլ օրինակաւ դնին ։ Որպէս դրձէ ՚ի ճառընտիրս , Թէ մեծն կոստանդիանոս յետ ամիսուիլոյ զմարմինս սուքիասանց՝ ասացեալ էրկ . * ՚Ի յետին ժամկին ՚ի զօրանալ գնդին հայոց՝ յայտնեացին նշխարք սրբ ,, ՚ի վկայիցն ՚ ։ այլ Թէ մի օրոյ ժամկի էրկ ասացեալ զայդ , չի՛ յայտ ։ Ոչ կայսմաւուրն յայլ իմն միտս տարածել այս քան՝ դնի այսպէս . յօգոստ . 27 . * ՚Արդարեացաւ սրբ Թէոդորն կոստանդիանոս , Թէ ՚ի վերջին ժամս ՚ի զօրանալ աղգին հայոց ,, ոգ մօտ ՚ի կատարած ՚ն՚ի՛ յայտնեացին նշխարք սրբց քոյ ,, չինցն սուքիասանց . և յայնժամ նորոգեացի քհնյապետութին ,, հայոց յարժանաւոր ցեղէն սրբն գիւիդոբի , և ԹէրուԹի ,, յազգէն արշակունեաց . և շինեացի վերստին ՚ս յաւելուա ,, սուԹք սրբն ՚ ։

Այս քան առեալ է յայսմաւուրն յօրինակէ իմեքէ ԹղԹոյ դաշանց . ուր գրի այսպէս . * Ամ է ինձ այսուհետև ,, գալ ՚ի տեսիլս և ՚ի յայտնուԹիս , զոր եցոյց ինձ տէր . զի յետ ,, քիմ ամաց իշխանքն հայոց տարագրեն զտունն արդասաց , ,, և ինքեանք տարագրին ՚ի հայրենեաց իւրեանց , և ան ,, կանին ըստ լծոյ ծննդեանն այլազգեաց զամս քիմն ։ Ապա , ,, որ դիսիցին յայնմ ժամանակին , զի տառապանօք տառա ,, պեր ազգն և ծն հայոց մինչև ՚ի եկս ոգւոց իւրեանց . որոց ,, փրկուԹի ՚ն ՚ի նոնէ եղիցի , և օգնականուԹի յազգատոհմէ ,, իմմէ ։ Այլ այս եղիցի ՚ի ժամս յետինս , յորժամ յայտ ,, նեացին նշխարք սրբց սուքիասանց քօշինցն . զորս ես ամ ,, փոփեցի առաջնորդուԹ՚ն հրեշտակի ՚ն՚ի բազրևանդ ,, գաւառի ՚ ։

Այսպէս Թէ ըստ քօշք կոչին սուքիասանք , ոմանք տան զայս պատճառս , զի ասեն , Թէ իբրև զվայրն քօշ կային նք ՚ի լերինս . կամ Թէ ըստ յովհաննու կԹղկսի և ըստ ճառընտրաց՝ գիտալք ծածկեցան մարմինք նց իբրև զքօշինցն . կամ զի տեղին այն կոչեաւ քօշ . ըստ որոյ այլազգական բառիւ կոչի քօսա տաղ , և կամ Թերևս վերոմեալ արուեստանուԹե առաջնոյ վանկի հնչմանս սուքիաս , իբր Թէ քոսիաս կամ քուչ՝ կոչեցեալ ի ,, յն քշ . որոյ չի՛ փիսկ ասելոյ սուքիասանց , եդեալ է քու ,, սեանց կամ քօշեանց . ոմն և լեառն սուկաւ՝ անուանեալ քառասս կամ քօսա ։

Ի վե պատերազմին հայոց ընդ հռոմայեցիս առ
Քինիթ պրայէանոսի ։

(1) Լուսաւորչին • Ը • 51 • զպատերազմիլ որդւոցն արտաշէսի հա-
մարի լինել յաւուրս դամետիանոսի • և յառելու ՚ի հաստատու-
թիւն այսր , թէ * զայս կամելով երդել յառաւպելն , դո-
,, մէտ զոմն ասեն եկեալ , որ է նա ինքն կայսրն դամետիա-
,, նոս , ոչ ինքնին եկեալ այսր , այլ՝ զհրամանն նորա և զգ-
,, զօրս այլազանելով՝ յանուն նորա կռւեն ։ Այլոց յայս
քան խորենացւոյն Թուի Թէ խառնեալ են յայլոց այլեայլ
բանք • և փիլոկ դնելոց տրայիանոս՝ եղեալ է դամետիանոս •
որ է ընդեմ • զի յաւուրս դամետիանոսի դեռևս սակաւամբ այ
տղայք էին որդիք արտաշէսի • ոմք և յայտնի ցուցանէ ձեռա-
գրոյն նորին իսկ խորենացւոյն • զի ըստ սահմանելոց նէր՝ Թագրել
արտաշէսի եղև յամի ՌՒՌ իջր • 88 • մի զի ոմք նա գրէ , աթգար
նստաւ ՚ի նախընթաց ամի ծննդեանն քրի • և Թագրեաց ամս •
ԼԸ • և սանատրուկ (առանձին) ամս • Չ • և երուէանդ ամս • Ի •
որում յաջորդեաց արտաշէս ։ Ընդ՝ այդ ամք ՚ի մի գումա-
րեալ՝ հասանեն ցամ ՌՒՌ • 87 • կամ 88 • այն է ուԹերդ ամն
դամետիանոսի կայսեր • և առաջինն ամ Թագրոսէ մերոյն ար-
տաշէսի • և զի խորենացին դնէ , Թէ յետ Թագրելոյն արտաշէսի
ծնանի նմա որդիք ՚ի սաթինկայ Թագուհւոյն , այսոքիկ որ-
դիք արտաշէսի մինչև ՚ի մահն դամետիանոսի լինին իբր վե-
ցամեայ և իբր եօԹնամեայ տղայք • զի դամետիանոս մեռաւ
յամի ՌՒՌ • 96 ։ Այս եԹէ այսպէս է՝ զիարդ ապա մարԹ էր
այսոցիկ տղայոց իբրև զզօրավար ՚ի մարտ ելանել ընդդէմ
զօրաց դամետիանոսի ։ Այլեւս պարտ է ասել , Թէ ոչ յաւուրս
դամետիանոսի , այլ՝ յաւուրս տրայիանոսի եղև այն մարտ ։
Այսուհետև զի ՚ի վէր յարձակմանն տրայիանոսի ՚ի հայս և ՚ի պարս ,
առ ընդդէմ հռոմայեցւոց աղքատն պարսից մեծագոռոզն ,,
,, ազգաւ պարԹև՝ եղբայր Ընդրկն հայոց խոսրովայ (՚ի որ-

,, տաշեան) • և զօրու ծանուս վառեալ հանդերձ որդւոյն սա-
,, նատրկաս՝ զբազում քաղաքս և զգաւառս առպատակել ա-
,, ւար հարկանէր և աղաւտս վարէր • Ա՚ւ այն ինչ յաւարի առ-
,, նոյր և զծն եփրատացւոց , յընթացս սատկուէ գլօրեալ
,, անկանէր յերիվարէն • և չարաչար խորտակեալ՝ զօրհասն
,, վախճաներ • և ի մեռանիլ անդ վոխանակ իւր կարգեր զ-
,, սանատրուկ : Ցաստատեալ նր ի թագաւորութե՝ մղեցաւ և
,, նա ընդեմ հռովմայեցւոց • Ա՚ւ թագաւորն հայոց խոստով
,, լուծեալ զմեռանիլ եղբօր իւրոյ մեվրդատեայ , զոր բնչ
,, տուեալ ի ձեռս որդւոյ իւրոյ փարաթեմասբատայ (զու-
,, ցե կամի ասել արտաւազդայ) , առաքեր յօգնութե եղբօր-
,, որդւոյ իւրոյ սանատրկոյ արքային պարսից :
,, Ո՚այս լուեալ դիւցազնին տրդատեան՝ իսկ և իսկ զօրա-
,, ժողով լիներ բազմութե յոյժ՝ խորհրդով սինկղիտոսին • և
,, եկեալ ի հռովմայ՝ չոր առներ խաղայր ընդեմ պարսից ի
,, պատերազմ յերկոտասաներորդ ամի կայսերութե իւրոյ • և
,, հասաներ ի կողմանս արեւելից հուսկ ի սեւևկիա ասո-
,, ւոյ : Ո՚այն աւուրսն անկաւ թշնամութի ի մէջ սանատր-
,, կոյ արքային պարսից , և հօրեղբօրորդւոյ նր փարաթե-
,, մասբատայ որդւոյ թագրին հայոց : Ո՚այն իբրև գիտաց
,, տրդատեանոս , զուարճացաւ յանձն իւր • և պատրաստ առա-
,, քեալ առ փարաթեմասբատ՝ յանկոյց զնա յինքն • և խոս-
,, ուացաւ նմա զթագրութի պարսից , եթե լինիցի նիզակակից
,, իւր ընդեմ սանատրկոյ : Ա՚ւ նր հաւանեալ ընդ այն՝ իբրեւ զն
,, հանդերձ գիներազնեայ լիներ առ տրդատեանոս :
,, Ա՚պա նիզակակցեալ նր դիմեաց տրդատեանոս ընդդեմ սա-
,, նատրկոյ արքային պարսից • և ի լինել մարտին՝ խորտա-
,, կեցան պարսիկք • և սանատրուկ ի փախուստ դարձաւ , և
,, ձերբակալ եղև և սպանաւ : Ա՚ւ ապա տրդատեանոս ըստ
,, խոստման իւրում կացոյց թագր ի վր պարսից զփարաթե-
,, մասբատ զորդի խոստովայ թագրին հայոց • և հնազանդե-
,, ցան նմա պարսիկք ‖ • Ա՚յս պատմութի խառն ի խուռն
լինի է , զոր դժուարին է համաձայնեցուցանել ընդ պատմուիս
հայոց • և դիւրին ևս է առնել ի գրելոյդ •
Ա՚նակ դիմիմ կատարս հին պատմիչ , որ իբր հարիւր ամաք յե-
տոյ է քան զտրդատեանոս , գրե • ի ԿԲ • գիրս • (զոր ի մէջ
բերի քաւիվիլլոս տեղեա • 553 • ինչ ի 557 •) այսպէ • * Պա-
,, տերազմ յարոյց տրդատեանոս ի վր հայոց և պարթեւաց ,
,, պատճառելով՝ թե թագրն հայոց ոչ յիւրմէ , այլ ի թագրէն
,, պարսից ընկալեալ էր զթագ • և սակայն նա յաւէտ ի
,, փառասիրութէ մեեցաւ յայս գործ : Ա՚յդ՝ իբրև եհաս
,, տրդատեանոս ի սահմանս թշնամեաց իւրոց ընդ սեաւ ծով ,

,, Նախարարքը գումարեաց և Թիւրքք բնակչաւք ի սահ
,, եղեն նմա. և մատուցին առաջի նոր երիվար մի հրա
,, գեալ, որ ի գուշս իջեալ խոնարհեցոյց զպարանոց իւր յոտս
,, արայիանոսի՝ ընծայելով նմա պատիւ յարգուն։ Ընկալաւ
,, արայիանոս զընծայն՝ առանց գլգուել ինչ մարտի. և
,, ապա գնացեալ ի սահաղա քաղաքն Հայոց՝ մեծարեաց պատ
,, ուով զԹիւրն հենիկեանց. և պատուհասեաց զփարթամ
,, սիր զարքայն Հայոց (զոր լակրտիոս՝ փարթամասէր ստու
,, գաբանէ). և առեալ զՀայաստան՝ էանց գնաց այլուր ... և
,, եկեալ ի միջագետս՝ էառ զմծբին. և ապա նաև զխոզան։
,, Այլ ի մեկնիլ նմա Յ՚ոյց անտի՝ ապստամբեցան ի նմանէ
,, ամբին՝ որոց տէրեալ էր. և կոտորեցին զգօրս նորա՝ զորս
,, Թողեալ էր Յ՚ոյս նոյ. ուստի և նա փութացեալ առաքեաց
,, ի վէր նոյ զղուկիոս և զմաքսիմոս. մաքսիմոս յաղթեցաւ
,, և անկաւ ի մարտի. զուկիոս յաղթող դառեալ՝ էառ վերս
,, տին զմծբին. և այրեաց զեդեսիա։ Երկուցեալ արայիա
,, նոսի՝ զի մի և պարթևք ապստամբեսցին, հաստատեաց ի
,, մոմ կացուցանել նոյ Թիւր. որոյ վա եկեալ ի ախթան, և
,, կոչեալ ի մի վայր զպարթևս՝ կարգեաց առեան մեծ. և
,, յետ բազմ պարծանաւք մեծաբանելոյ առաջի նոր վա գոր
,, ծոց իւրոց, զորս արար, կայսերց Թիւր պարթևաց զփար
,, թամասբատ, և ետ Թագ ի գլուխ նմ։ Այս ապա եկեալ
,, անտի՝ խաղաց ի վէր այլոց ազգաց ....
,, Ո մնաւ ածէր տրայիանոս միւսանգամ խաղալ զօրօք ի
,, միջագետս. բայց ծանրացեալ ի հիւանդութէ՝ ձանապարհ
,, արար յիտալիա, Թողեալ երկրին առուցոց զեղխոս ազ
,, րիանոս հանդերձ զօրօք ||։ Յաւելուս ասել դիոնի, Թէ
* Թէպետ և առին հռոմայեցիք զՀայաստան և զմեծ մասն
,, միջագետաց, և յաղթեցին պարթևաց, բայց ի դերև եղեն
,, այնչափ աշխատութիւնք նոր. վն զի պարթևք մերժեալ ըզ
,, փարթամասբատ՝ ապստամբեցան ի կայսերէ ||։ Այս
պատմեմ ոչ ինչ ընդհատ է ի վերոյգրեցեալդ. զորս և ոչ
իսկ մարթ է քննուն առնելով՝ մնասմբ իւիք առուգել։

ի վէր արտասանոյ, որ եղև վերջին Թիւր արշակունեաց ի պարս։

1. Ի գերս ազատանգեղոսի ի յունաստանն, ուր ընդարձակ
(1) պատմի մերժումն և մահ արտաւանայ յարտաշիրէ, այս արտա
ւան կոչի եղբայր խոսրովու Թիւրին Հայոց. զի գրի անդ այսպէ
* Ուր եղև առ արշակունին (խոսրով) արքայ Հայոց մեծաց,
,, Թէ արտաշիր որդի սասանայ զօրացեալ բռնացաւ ի Թա
,, գաւորէ պարսից. և կորոյս զեղբայր նր զարտաւան ||։

և դար-

և դարձեալ ՚ի ստորև • * Եհաս գուժկան առ խոսրով արքայ
,, Հայոց՝ եղբայրդ արտաւանայ ։ ։ Եւ յայսմանէ մեռուածքառ-
ուէս համարի , թէ յիրաւի արտաւան էցէ եղբայրը խոսրովու։
Օ՚նոյն գրէ և պրոկոպիոս՝ արշակ կոչելով զխոսրով։ գիրք • Բ •
շին • յոտ • գլ • Ւ ։ ։ Այնպէս և ՚ի գիրս զենոբայ ՚ի ձեռագիրն եղ-
բայրը կոչէ • * Թէպետ և քիչ մ՚անգամ ասէ եղև միջնորդ ար-
,, քայն Ձենոբիոս կարաց գրաւել զմիտս խոսրովու ՚ի հաշտութի
,, (Ը արտաշրի) , այլ՝ տալով և արուվ հանել զվրէժս եղբօրն
,, իւրոյ (արտաւանայ) , զոր սպան արքայն պարթից (արտա-
, շիր) ։ ։ Նակ անտարակոյս հին հեղինակ լսած էր , որ գրեալ ՚ի
վէպ այսր համառօտին ագաթանգեղոսի , ոչ միայն եղբայր խոս-
րովու համարի զարտաւան , այլև յաւելու ասել , թէ վասն
այսորիկ իսկ կամեցան պարթիկք մերժել զինա՝ ՚ի զարտաւան ,
եթէ զի ոչ էր նա յազգէ իւրեանց , այլ՝ յազգէ հայոց ։
Եւ սակայն այս բան ընդդէմ եղանէ հարազատ պատմութի
խորենացւոյն՝ նաև ագաթանգեղոսի իսկ , և և երևելի մա-
տենադրաց այլոց ազգաց , որք առ հնոյ համարին զարտաւան
լինել ՚ի յաջորդուէ հարազատ թագրայն պարսից • զոր և ան-
տարակոյս հաստատ պատմութի դիտէին ժամակոյք ։ Նակ թէ
արտաւան եղբայրը ասի խոսրովու , այդ ոչ է վասն բնական
եղբայրութե , այլ՝ վ՚ն հարազատութե արշակունեաց ցեղին , յոր-
մէ սերեալ էին թագրք հայոց և պարսից • ոմն և կարգք շա-
րադրութե բանիցն ագաթանգեղոսի յայտնի ցուցանեն ։ Ա՚ոյժ
յաղագս խոսրովու այլ և այլս գրեն արտաքին պատմիչք • ոմն
յիշատակեցաք ինչ ինչ ՚ի վերոյ ։
Պիտելի է և , զի ՚ի գիրս խորենացւոյն • Բ • 66 • և այլոց
ոմանց գնի կալ արտաւանայ ՚ի թագրութե ամն • լ։ ։ Նակ
թարգմանիչք նորին անգիտացիք ոչ տեսանելով զայն համա-
ձայն ժամակոյիցն հռոմէական , և կամելով ուղղել • իմ •
գնեն ՚ի վերջին ծանօթութիւն իւրեանց • երես • 392 ։ Ա՚այց մի-
ջոց առանձինն թագրելոյ արտաւանայ մինչև ցմեռանիլ նմ՝
որ եղև յամի տեառն • 226 • ժէ • կամ ժը • ամք հաշուին • որպէս
յայտնի առաւել ՚ի բանից գրելոց ՚ի յաջորդ ծանօթութեդ ։

՚Ի վե՛ր ձգել ընթերցող առաւելեալն ասելոյն ։

Պատմիչք հռոմէացեաց և յունաց գրեթէ առ հասարակ ,
նաև ասորւոց իսկ՝ համարին զթագաւորել արտաշրի սասա-
նեան ՚ի չորդ կամ ՚ի հինգերորդ ամի աղեքսանդրոսի կայ-
սեր մահուան , յերկիցդամ ամի • մ՚ծա • ոլիմպիադեին • այն է
յամի տեառն • 226 ։ Օայս յայտնի առանձե և դիտելի կասկած
մատենագիր ժամակոյց , որ ՚ի նոյն աղեքսանդրոսէ կայսերէ

կարգեցաւ հիւպատոս յուլիոսդ առի կայսերուէ նէր ։ Պատմէ առ , թէ ի յառնել արտաշրի մեք առ ամենեքին զահի հարաք • և բնմէք ի հռոմէ ոչան զօրաց մերոց անցին ի կողմն արտաշրի • և լուաք առ , թէ պատերազմեալ է ընդ հայոց , և յաղթեալ ի նմանէ դարձեալ է յետս՝ վերստին զօրաժողով լինել , և առնել քաղաքս ազգաց ։ Եւ յառելոյ գրել զանձնէ , թէ ինքն յոյն ժամանակս իշխան գոլով զօրաց ի պանոնիա՝ խնդրեաց ի յաղեքսանդրոսէ կայսերէ հրաժարիլ ի գործակալութենէ անտի իւրմէ , և գնալ ի հայրենիս իւր ի բիւթանիա • ուր և ոչ ժամանեաց գրել զպնորզմիլ աղեքսանդրոսի ընդ արտաշրի ։ Զոյն աւանդէ նաև հերոդիանոս ծիլակից • որ պատմէ և զպատերզմիլ նորին աղեքսանդրոսի կայսեր ի ժիջերդոդ ամի իւրում ընդ արտաշրի ։ Այս ցուցանէ յայտնապէս և ծիկապրուէ խորենացւոյն • զի եթէ սկսցես ի ատոր ի վեր հաշուել զամսն՝ զորս տայ նա Թիգրացն պարսից , Թագաւորելն արտաշրի լինի յամի ՈՒՌ • 226 • որ ըստ հռոմայեցւոց ընդ հինգերորդ ամ աղեքսանդրոսի ։ Զսայն ի ատոր ի վեր հաշուել , յե ի նատելոյ յաղկերտի երկրէն մինչև ի նաստիլ արտաշրի • զի որովհետև ծիլ Թիգրեցւոյն յաղկերտի է որոշ և յայտնի , մարթ է ընդ այսմ անվրէպ չափել •

Զդէ ընդ խորենացւոյն և ըստ աշակերտակցաց նէր կորեանն և եղիշէի և փարպեցւոյն՝ Թագաւորելն յաղկերտի երկրէ եղև յայտնի ծիլիւ , յորում էր ամն ՈՒՌ • 439 • և այս ժամանակ անխախտ է • ընդ որում ունիս տեսանել ի ծանօթ • ԺԲ • (1) ։ Զայս այսպէս եղեալ՝ գտանեմք ընդ հաշուի խորենացւոյն զվիճոյ ժամանակին՝ ընդ ել ելս արտաշրի՝ ամն • 213 • ընդ զամն Թիգրոյ պարսից դէպ ի վեր գնալով Թուի ըստ այսմ օրինակի • վեամ երկդ՝ ամն • իսս • յաղկերտ առաջին • ժիս • վեամ կըբամն • ճ • արտաշիր • ղբ • շապուհ երկայնակեաց • ձ • որմիզդ • ղբ • ներսէհ • լճ • շապուհ առաջին՝ որդի արտաշրի սասանեանց , ընդ ամ • խէ • որոց գումարն լինի • 175 • և հասանէ ցամն ՈՒՌ • 264 • յորմէ և անդր ի վեր մինչև ցամ ՈՒՌ • 226 • ինան ի միջի ամ • ընդ • որոց զառաջն տայ խորենացին աւանձին պնորզմացն արտաշրի ընդ մերոյն խոտրովիւ՝ ըստ ազաթանգեղոսի • և զքսան և վեց ամսն տայ տիրելոյ արտաշրի ի վերայ հայոց • և այլ ևս երկու ամք ի միջոցս ծիլիւն ի գալ անդ անակայ ի հայս • որով և սկիզբն Թիգրելոյ արտաշրի սասանեան անշուշտ հասանէ ցամ ՈՒՌ • 226 ։

Եւ ահա այս հաշիւ ամենևին ուղիղ է և հաստատուն այլոց մատենագրաց • որով յայտնի տեսանի՝ Թէ ծիկապրուէին խորենացւոյն յելոյն արտաշրի մինչև ի նատիլ յաղկերտի ցաւորս իւր է ձիշդ չափեալ ըստ ծիկապրուէին ամ աղգայ ։

Այլ մի ինչ է, որ ի մէջ բերէ զանհամաձայնութեն մեծ. եթէ զի խորենացին զկարգ կայսերացն քան ամօք ի վեր շարժէ. ըզկնի զայն ամ՝ զոր մատենագիրք կայսերաց համարին հինգերորդ ամ աղեքսանդրոսի կայսեր մամեան, խորենացին հինգերորդ ամ փիլիպպոսի կայսեր. յորոյ միջի անցին ամք. ի. կիւրեան. և ըստ այնմ կարգէ նաև զԺամկս այլոց կայսերաց մինչև ցմեծն Թէոդոս և ցարկադէոս. իսկ ի հասանել ի սկիզբն կայսերութեն Թէոդոսի փոքուն՝ կարգէ համաձայն կայսերական Ժամագրութեանց։

Զատ այսմ է տեսանել և ի գիրս սեբէոսեանոսի առաւկայ. ա. 5. և յայլ պատմուխիս հայոց։ Այլ սամուէլ երէց գնէ յաւուրս գորդիանոսի կայսեր, բայց այնպիսի թուականաւ՝ որ ըստ Ժամկին և ըստ անձին անկանի յաւուրս փիլիպպոսի։ Իսկ յայսմաւուրս. Հոկտեմբ. 18. գնի աւելի ևս ի վայր՝ ընդ յաւուրս դեկոսի և վաղերիանոսի, այն է յամի ՌՃն երբ. 250. յորմէ ծագի շփոթութեն Ժամագրուեն ոչ սակաւ։ Իսկ մեք առի համաձայնութեն իրացդ չկարացաք այլ ինչ առնել, բայց եթէ զկարգ պատմութեն իւրաքանչիւր ազգի ըստ իւրեանց կարգել, համարելով զիւրաքանչիւր պատմութիւնն Ձշմարիտս՝ ուչ ըստ Ձիշդ Ժամկին, այլ ըստ երացն եղելոց. զի աստուած ի պատմուչեն արտաշրի հարկ եղև մեզ յաւէտ յեղեալսն հայիլ՝ քան ի Ժամկն. որովհետև յայլևայլ գիրս այլևայլ Ժամկք առաջի դնին։ Այլ թէ զիարդ, դիցուք առա առաջի։ գիրս յունաց. ԺԵ. ամք ընծային թագաւորութեն արտաշրի, (զուգե շփոթելով ընդ ամենայն արտաւանայ.) և մահ նորա դնեն յառաջ քան զնաստիլ փիլիպպոսի կայսեր. և յետ նորա որ ինչ գործք գործին, համարին շապհոյ որդւոյ նորա. զորմէ և ասեն ոմանք ի յունաց, թէ ձերբակալ արարեալ էր զկայսրն վաղերիանոս։ Իսկ եթէ հայեացուք և ի պատմութիս հայոց, և յերկուց կողմանց համեմատեցուք զամս, հարկ լինի տալ արտաշրի աւելի քան զիսան ամ. վասն զի ըստ աւանդելոյ մատենագրացն հայոց՝ մանաւանդ խորենացւոյն, արտաշիր եկաց մինչև ցառաջին ամ դիոկղետիանոսի կայսեր։ Ընդ ըստ անխախտ Ժամագրութեն հայոցն՝ յառաջնոյ ամէ դիոկղետիանոսի դէպ ի վեր մինչև ի չորդ ամ փիլիպպոսի կայսեր՝ հաշուին ամք. լԸ. ըստ որոյ չափէ խորենացին զԺամկ արտաշրի. իսկ ի չորդ ամէ փիլիպպոսի մինչև ցհինգերորդ ամ աղեքսանդրոսի մամեան, յորում ամի Թագաւորեաց արտաշիր, հաշուին ամք. ի. և ըստ այսմ քովանդակ ամք Թագրութեն նր լինին ըստ ամ. ծՂԸ. զոր Թարգմանիչք խորենացւոյն հաշուեն. ծՂ. և սամուէլ. խԵ. ասողիկ. իս. և այլք այլազգ։ Այսպիսի տաքբերու-

Թէ ես ժամանակաց հայեցեալ մեր, և զէլը լրացն չգտեալ, զսկիզբն Թիւրելոյն արտաշրի եդաք յամն ՇՆԵ. 226. ստիպել ՚ի հարկեցուցիչ բանից Ժամակից մատենագրաց, նաև ըստ հաշուի խորենացւոյն ՚ի վեր կոյս Թոռնելով. իսկ զմահ նորա եդաք յամն ՇՄԴ. 284. ստիպեալ ՚ի բռնադատիչ բանից խորենացւոյն՝ որ հիմնեալ է ՚ի վկայութիւն բանից հինն մատենագրաց. ոչ տեսի ՚ի ստորև։ Իսկ ՚ի միջոցի այսր Ժամից քառասնեւերիցք ամ տուաք արտաշրի առանձինն. և հնգետասան ամ համդերձ որդւովն, ՚ի վեր շարժելով զամն՝ զորս դնէ խորենացին. և այս՝ ըստ պահանջելոյ կարգի պատմութեան հայոց։

ՈՒ ՚ի վեր այսր ամի՝ եթէ ոք այլազգ առցէ զնախակարգեալ հաշիւ խորենացւոյն ՚ի վերայ Ժամից՝ յորում կայան զմեր արտաշիր և որդի նորա շապուհ, կարէ ասել, թէ միսկ տալոյ. ԻԷ. ամ արտաշրի, և մի ամ շապհոյ, պարտ էին տալ մի ամ արտաշրի. և ԻԷ. ամ շապհոյ. ըստ որոյ ամք Թիւրուն արտաշրի լինին. ԼՈ. յորոյ ՚ի ժե երորդ ամի գահակից եալ էին նմա որդի նորին շապուհ յամն ՇՈՒ՝ իբր. 241. իսկ ամք շապհոյ առանձինն լինին. ԼԷ. և ընդ ամ. ԻԷ. ՚Այս հաշիւ կարէ մատամբ ինչիք ուղիղ գալ, բայց հարազատ պատմութիւնք խորենացւոյն և այլոց մատենագրացն հայոց և ազգացն յունաց իսկ՝ ամենևին ընդդեմ հանին այսմ։

ՈՒ վախճանի զայս ասելովք. եթէ առանց սկզբնաճառէ որ խոսեցաւ, ոչ է յայտ՝ թէ արտաշիր սասանեան արդեօք ըստ ամ քանի՞ ամն թիւրեալ էին. խորենացին յայտնապէս ասէլի տայ քան. ԼԷ. ամն. և ոչ որոշէ՝ թէ ընդ ամ քանի՞ ամ եկաց։ Իսկ աղաթիաս՝ յորմէ առնուն և այլք, որպէս ասացաք, դնէ. ԺԵ. միայն։ Իսկ տակայն որ ուշադրեաւ խորենացւոյն հնագոյն է քան զաղաթիաս հարիւր ամաք, և ՚ի հնագոյն մատենից հանել զպատմութիւն իւր, աւելի պարտաւորիմք հետևիլ խորենացւոյն՝ քան վկայուել աղաթիայ, միանգամայն անսալով և անխախտ ժամագրութեանց կայսերաց։

Իսկ այն՝ զոր ասէ աղաթիաս, թէ ինքն հանեալ էին ընդ կարգ թիւրից պարսից ՚ի մատենից կիր՚ի գիւանսայ նոցին, և զամս արտաշրի գտեալ էին. ԺԵ. այդ չաղագէ ինչ. վն զի ոչ եթէ ինքն անձամբ եհան անտի, այլ՝ ոմն նա ինքն գրէ. Փիլ. Ե. երես. 66. կամ. 47. ՚ի ձեռն սարգսի ուրումն Թարգմանչի. և ուսումն յայտ է թէ սարգիսն այն անվրէպ հանեալ էին յուղիղ մատենից պարսից, և կիր թէ անսխալ առ յեաւին մատենագիրս հասեալ էին այն։ Իսկ ես և էի, եթէ վկայութիւն աղաթիայ կարէ զօրել, առաւել ևս զօրէ վկայութիւն խորենացւոյն, որ ոչ միայն հնագոյն էր քան զնա,

այլև

այլև տեղեակ գտրուեձ և որպիսուեձ պարսից • ուրեմն եւ
եձ ըս աղաեթեայ ոմանք • ժե • ամ գրեն մեզ արտաշես , մեք
վստահուեձ կարօղ եմք ըս խորենացւոյն գնել աւելի՝ որչափ
կարգ պատմուեձ նմի պահանջէ ։ Ոսկ զոր աւանդեն ոմանք
՝ի հին պատմչաց , ամի և նա ինքն ազաեթեաս • գեր • ձ • ե •
բեռ • 134 • կամ • 94 • եձ շապուհ արքայ պարսից որդի ար-
տաշրի (յամի ՇՌՆ իբր • 259 •) կալաւ զվաղերիանոս կայսր ,
և մրեձելերծ արար զնա , և նկուն արար զգօրաւն հռոմ-
մայեցւոց , այդ ոչինչ ներհակի կարգի պատմուեձն խորե-
նացւոյն • զի զայդ կարէր առնել շապուհ յաւուրս կենդա-
նութեձ հօր իւրոյ • որպէս նա ինքն խորենացին քիչ գործս
